ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հունիսի 2024 թվականի N 919 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 14-Ի N 758-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մայիսի 14-ի «Առգրավված, վերցված, կամավոր հանձնված կամ գտնված (այդ թվում՝ համապատասխանության սերտիֆիկատ չունեցող) զենքը կամ ռազմամթերքը ոստիկանությանը փոխանցելու, դրանք ընդունելու և ոչնչացնելու կարգը հաստատելու մասին» N 758-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) որոշման վերնագիրը «զենքը» բառից հետո լրացնել «, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերը» բառերով.

2) որոշման 1-ին կետը «զենքը» բառից հետո լրացնել «, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերը» բառերով.

3) որոշման հավելվածի վերնագիրը, 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ կետերը «զենքը» բառից հետո լրացնել «, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերը» բառերով.

4) որոշման հավելվածի 6-րդ, 12-րդ, 13-րդ, 16-րդ և 18-րդ կետերը «զենքի» բառից հետո լրացնել «, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերի» բառերով.

5) որոշման հավելվածի 15-րդ կետի «զենքը և դրա մասերը» բառերը փոխարինել «զենքը, դրա մասերը և հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերը» բառերով.

6) որոշման հավելվածի 11-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«11. Ոչ պիտանի զենքի, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերի ոչնչացման նպատակով ստեղծվում է հանձնաժողով: Հանձնաժողովը պետք է կազմված լինի առնվազն 5 անդամից, որոնցից առնվազն 1-ը՝ համապատասխան փորձագետ: Հանձնաժողովը ձևավորվում է ներքին գործերի նախարարի հրամանով: Հանձնաժողովի նախագահին և անդամներին նշանակում է ներքին գործերի նախարարը՝ հաշվի առնելով զենքի հետ վարվելու անվտանգության կանոնների իմացությունը: Հանձնաժողովի կողմից ոչ պիտանի զենքը, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերը ոչնչացման նպատակով զինապահեստից ելքի փաստաթղթով դուրս են գրվում: Մինչև ոչնչացնելը հանձնաժողովը մանրակրկիտ ստուգում է բոլոր զենքերը և հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերը: Հանձնաժողովի անդամները պետք է խստորեն պահպանեն զենքի հետ վարվելու անվտանգության կանոնները:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

20.06.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ